

ԱՐՑԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ

Ցուլակ Ակոպյան, Երևանի պետական համալսարան

Գոռ Պետրոսյան, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրոս

Ձնայած այն հանգամանքին, որ Հայաստանը Եվրոպայի Խորհրդին անդամակցության դիմում է ներկայացրել 1996թ.-ին, իսկ կառույցի լիիրավ անդամ է դարձել միայն 2001թ.-ին՝ արցախյան հակամարտության շուրջ ԵՆՏՎ առաջին փաստաթղթերն ընդունվել են դեռևս 1992թ.: Հակամարտության կարգավորման ամբողջ ընթացքում այն շարունակել է մնալ Խորհրդարանական վեհաժողովի ուժադրության կենտրոնում՝ մարդասիրական, ֆաղափական ցիտատումներով: Արցախյան հակամարտությանը Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովն առաջին անգամ անդրադարձել է դեռևս 1992թ.-ին: ԵՆՏՎ շրջանակում ընդունված առաջին փաստաթղթերում մասնավորապես շեշտադրվում է խնդրի մարդասիրական կողմը:

1993թ.-ին ԵՆՏՎ-ն արցախյան հակամարտությանն անդրադառնում է «նախկին խորհրդային երկրների միջև բնակչության տեղաշարժերի մասին 996» բանաձևի շրջանակում: Փաստաթուղթը մասնավորապես նշում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո «Մոլդովայից, Վրաստանից, Հայաստանից, Ադրբեջանից, Օսիայից և Ինգուշերիայից, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից և Կենտրոնական Ասիայի որոշ երկրներից շուրջ մեկ միլիոն էթնիկ ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ են տեղահանվել: Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում և Տաջիկստանում վերջին և դեռևս շարունակվող բռնությունների պատճառով տասնյակ հազարավոր ընտանիքներ անհապաղ օգնության և շարունակական օժանդակության կարիք ունեն՝ ձմռանը դիմակայելու համար»¹:

Արցախյան խնդրին Վեհաժողովն առաջին անգամ անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ 1251 (1994)¹ հանձնարարականի (1994թ. նոյեմբերի 10) և նույն օրն ընդունված համապատասխան բանաձևի մեջ: Առաջին փաստաթուղթը մասնավորապես նշում է, որ ԵՆ Եվրոպական ոչ-անդամ երկրների հետ հարաբերությունների կամփոսեն 1992թ.-ից ի վեր մի շարք լսումներ է կազմակերպել, որոնց մասնակցել են Հայաստանի և Ադրբեջանի խորհրդարանների, «Լեռնային Ղարաբաղի դեկլարության» և «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական շահագրգիռ կողմի» պատվիրակությունները: Փաստաթղթում ԵՆՏՎ-ն գոհունակություն է հայտնում հրադադարի պահպանման առիթով և հույս

¹ԵՆՏՎ Թիվ 1207 (1993) հանձնարարականը նախկին Խորհրդային Միության պետությունների միջև բնակչության տեղաշարժերի վերաբերյալ.

հայտնում, որ դրան կհետևի «Շահագրգիռ բալոր կողմերի միջև հնարավորինս արագ խաղաղության համաձայնագրի ստորագրումը»²: Այս հարցի առնչությամբ ԵՆՏՎ-ն ողջունում է այդ ուղղությամբ ԵԱՀԽ Մինսկի խմբի, ՄԱԿ ԱՆ-ի, ՌԴ-ի կառավարության եւ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի ջանքերը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ 1047 (1994) բանաձեւով (1994թ. Նոյեմբերի 10) «Խորհրդաժողովը հայտնում է իր պատրաստակամությունը՝ խթանելու խաղաղության պայմանագրի կնքումն իր հնարավորությունների առավելագույն սահմաններում՝ մասնավորապես խրախուսելով Շահագրգիռ կողմերի խորհրդարանների միջև երկխոսությունը»³: Վեհաժողովը պատերազմող կողմերին կոչ է անում անհապաղ կազմակերպել փախստականների վերադարձն իրենց տներ, հարգել փոքրամասնությունների իրավունքները՝ որպես հիմք ընդունելով 1201 Հանձնարարականը: Ադրբեջանին ու Թուրքիային անհապաղ կոչ է արվում անմիջապես դադարեցնել Հայաստանի հետ հաղորդակցության ուղիների շրջափակումը:

Հաջորդ բանաձեւերում եւս ԵՆՏՎ-ն արցախյան խնդրին անդրադառնում է փախստականների եւ ընդհանրապես մարդասիրական իրավունքների տեսանկյունից: Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց մասին 1263 (1995)¹ հանձնարարականով (1995թ. մարտի 15) ԵՆՏՎ-ն «Լեռնային Ղարաբաղի դաժան հակամարտության գոհերին եւ տեղահանված անձանց տրամադրվող միջազգային օգնությունը համարում է անբավարար»: ԵՆՏՎ անդամ երկրներին կոչ է արվում ՄԱԿ գործակալությունների, Կարմիր խաչի, եւ հասարակական կազմակերպությունների միջոցով ապահովել միջազգային հանրության երկարամյա ներկայությունը Կովկասում: Կոչ է արվում «Ղարաբաղի շրջակա տարածքների» ակնագերծման համար ապահովել անհրաժեշտ փորձաֆննություն եւ տրամադրել մարդկային ռեսուրսներ, ֆազակական երկխոսություն սկսել Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի իշխանությունների հետ՝ վերահաստատելով մարդու իրավունքների, խորհրդարանական ժողովրդավարության հաստատման, անհրաժեշտության դեպքում փոքրամասնությունների իրավունքների ու մշակութային ինքնության պաշտպանության բնագավառներում ԵՆՏՎ աջակցությունը: Նույն օրն ընդունված Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց վիճակի մասին 1059 (1995) բանաձեւում (1995թ. մարտի 15) «Վեհաժողովը ցավով նշում է, որ 1988թ. սկիզբ առած Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը անասելի տառապանքների պատճառ է դարձել, ինչի հետեւանում գոհվել են

²ԵՆՏՎ, Թիվ 1251 (1994) հանձնարարականը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ.

³Նույն տեղում.

հազարավոր մարդիկ, վիրավորվել տասնյակ հազարավորները, ավելի քան մեկ միլիոնը տեղահանվել կամ փախստական են դարձել Հայաստանից եւ Ադրբեջանից»⁴:

Հատկապես ուշագրավ է բանաձեռի երկրորդ կետը, որտեղ նշվում է. «Այս վերջին թիվը (մեկ միլիոն տեղահանվածներ) ներառում է հարյուրհազարավոր անձանց, ովքեր մինչեւ 1991թ.-ը ստիպված են եղել լքել իրենց տները խորհրդային իշխանությունների իրականացրած դաժանությունների կամ սահմանած կարգերի պատճառով»⁵: Հայկական կողմի համար այս կետը թերեւս առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ պարզաբանում է մտցնում ԵՆՏՎ փաստաթղթերում «փախստականների վերադարձի իրավունք» ձևակերպման մեջ:

Եվրոպայի Խորհրդի Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության նախաժամին արցախյան հակամարտության անցումային ամրագրվում է երկակի սկզբունքների բանաձևը: Անդրկովկասում հակամարտությունների մասին 1119 (1997) բանաձեռում (1997թ. ապրիլի 22) առաջին անգամ շեղանակով նշվում է «օկուպացված տարածք» ձևակերպումը (մինչդեռ Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանված անձանց մասին 1263 (1995) հանձնարարականում (1995թ. մարտի 15) խոսվում է «Ղարաբաղի շեղանակ տարածքների մասին»): ԵՆՏՎ թիվ 1119 (1997) բանաձեռում մասնավորապես նշվում է, որ հարավկովկասյան երեք երկրները, որոնք ԵՆ-ում հատուկ հյուրի կարգավիճակ ունեն, դիմել են լիիրավ անդամակցության համար: Լեռնային Ղարաբաղի եւ Աբխազիայի հակամարտությունների կարգավորման հարցում դրսևարված իրական ֆալսֆական կամքը կօգնի արագացնել անդամակցության ընթացակարգը: Փաստաթղթի 5-րդ կետում նշվում է. «Թեւեւ այս երկու հակամարտություններն (Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ) էությունը տարբեր են, Վեհաժողովն ընդգծում է, որ դրանց ֆալսֆական կարգավորումը պետք է բանակցվի ներգրավված բոլոր կողմերի միջեւ՝ 1975թ. Հելսինկիի Եզրավակիչ ակտից եւ 1990թ. Փարիզյան խարտիայից բխող սկզբունքների հիման վրա՝ սահմանների անխախտելիություն, նշված տարածքներում բնակվող անձանց անվտանգության երաշխավորում, մասնավորապես՝ բազմազգ խաղաղապահ ուժերի միջոցով, Աբխազիայի եւ Լեռնային Ղարաբաղի լայն ինֆնավարության հարցը պետք է բանակցվի շահագրգիռ բոլոր կողմերի միջեւ»⁶ :

ԵՆ-ին Հայաստանի անդամակցության դիմումի վերաբերյալ Կարծիք թիվ 221 (2000)-ում (2000թ. հունիսի 28) ԵՆՏՎ-ն կրկին ընդգծում է հարավկովկասյան հակամարտությունները խաղաղ

⁴ ԵՆՏՎ թիվ 1263 (1995) հանձնարարականը Հայաստանում եւ Ադրբեջանում փախստականների եւ տեղահանվածների մարդասիրական վիճակի վերաբերյալ.

⁵ նույն տեղում.

⁶ ԵՆՏՎ թիվ 1335 (1997) հանձնարարականը Անդրկովկասում փախստականների եւ տեղահանված անձանց վերաբերյալ.

հանապարհով կարգավորելու անհրաժեշտությունը: Փաստաթղթում մասնավորապես խոսվում է այն մասին, որ Վեհաժողովին խնդրելով կարծիք արամադրել անդամակցության դիմումի վերաբերյալ՝ Նախարարների կոմիտեն վերստին ունի է, որ Եվրոպայի խորհրդի եւ Կովկասի երկրների միջև առավել սերտ փոխհարաբերությունները պահանջում են ոչ միայն էական ժողովրդավարական բարեփոխումներ, այլև հակամարտությունները խաղաղ հանապարհով հանգուցալուծելու պատրաստակամություն: Խորհրդարանական վեհաժողովը հավատում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցությունը կարող է նպաստել վստահության մթնոլորտի ստեղծմանը, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման համար: Վեհաժողովը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը ամենախարմար կառույցն է հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար, Վեհաժողովը նկատի է առնում Հայաստանի Նախագահի նամակը, որում վերջինս պարտավորվում է հարգել հրադադարի համաձայնությունը նախֆան հակամարտության վերջնական հանգուցալուծումը, եւ շարունակել խաղաղ բանակցության հանապարհով հակամարտության կարգավորումը բոլոր ներգրավված կողմերի համար ընդունելի փոխզիջումներով: Երկու երկրների նախագահների միջև հանդիպումների հաճախականությունն ավելացել է. Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի խորհրդարանների խոսնակները որոշել են սարածաբջանային խորհրդարանական համագործակցություն ծավալել, որը կներառի մասնավորապես խորհրդարանների խոսնակների հանդիպումներ եւ խորհրդարանական սեմինարների անցկացում վերոնշյալ երեք երկրների մայրաքաղաքներում եւ Ստրասբուրգում: Տարածաբջանում առաջին հանդիպումը, որն անցկացվեց Թբիլիսիում 1999թ. սեպտեմբերին, հնարավոր դարձրեց Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունների միջև ստեղծել լարվածության թուլացման եւ վստահության մթնոլորտ⁷:

Ե՛կ անդամակցության համար Հայաստանը Արցախի մասով պարտավորվում է՝

1. Հետամուտ լինել այս հակամարտության միայն խաղաղ հանապարհով կարգավորմանը.
2. Օգտագործել Արցախի հայերի նկատմամբ ունեցած զգալի ներգործությունը՝ հակամարտության կարգավորմանը նպաստելու նպատակով.
3. Միջազգային եւ ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով եւ միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վնասակար են մերժելով հարեւանների նկատմամբ ուժի սպառնալիքի

⁷ Տե՛ս՝ ԵՆԽՎ Թիվ 221 (2000) կարծիքը Եվրոպայի խորհրդի անդամակցություն ստանալու նպատակով Հայաստանի ներկայացրած դիմումի վերաբերյալ.

որևէ դրսևորում⁸: ԵՆ-ին անդամակցելու ժամանակ բառացիորեն նույն պարտավորություններն է ստանձնում նաև Ադրբեջանը⁹:

Մարդու իրավունքների պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի գործունեության անկյունաքարերից է: Ուստի ցանկացած հակամարտություն, որն ինքնին սպառնալիք է մարդու՝ ապրելու բնական իրավունքին, դեմ է կառույցի փլիխտվայությանը: Այսպես էլ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման պահանջը դարձավ ԵՆ-ին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության նախապայման: Արցախյան հակամարտությանը վերաբերող ԵՆ բոլոր փաստաթղթերում միջազգային իրավունքի բոլոր սկզբունքներից առավել կարևորվում է ուժ եւ ուժի սպառնալիք չկիրառելու պահանջը:

Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է մնացել իր ստանձնած պարտավորություններին. այս մասին խոսվում է նաև ԵՆԽՎ 1304 բանաձևում, որն ընդունվել է ԵՆԽՎ-ի կողմից 2002թ-ին: Բանաձևում մասնավորապես ասվում է՝

1. Վեհաժողովը հանաչում է այն անհերքելի ջանքերը, որ Հայաստանը ձեռնարկել է Ադրբեջանի հետ կանոնավոր բարձր մակարդակի կապեր պահպանելու համար, եւ այն դրական ազդեցությունը, որ դրանք ունեցել են Լեռնային Ղարաբաղի հայերի վրա՝ նպատակ ունենալով հասնելու համապատասխան խաղաղ կարգավորման:

2. Վեհաժողովը հուսով է, որ ընթացքի մեջ գտնվող բանակցային գործընթացը շուտով կհանգեցնի Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընդունելի լուծման՝ համահունչ մնալով Եվրոպայի խորհրդի եւ միջազգային օրենքի սկզբունքներին:

3. Այն հիշեցնում է, որ կարող է նախատեսել մոնիթորինգի գործընթացի փակում միայն այն դեպքում, եթե շահագրգիռ պետությունը կատարի իր բոլոր հիմնական պարտավորությունները, որոնք Ադրբեջանի ու Հայաստանի դեպքում ներառում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը¹⁰:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ընդունվել են նաև մի շարք բանաձևեր, որոնք, մեր կարծիքով, խոչընդոտել են խնդրի խաղաղ կարգավորմանը: Որպես օրինակ կարելի է նշել 2005թ-ին ԵՆԽՎ-ի կողմից ընդունված բանաձևը, որում ասվում է՝

1. Խորհրդարանական Վեհաժողովն ափսոսում է, որ զինված բախումների սկսվելուց ի վեր ավելի քան մեկ տասնամյակ անց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը դեռևս

⁸ Տե՛ս՝ նույն տեղում.

⁹ Տե՛ս՝ Կարծիք թիվ 222 /200/ ԵՆ-ին անդամակցության Ադրբեջանի դիմումի վերաբերյալ.

¹⁰ Տե՛ս՝ ԵՆԽՎ թիվ 1304 /2002/ բանաձևը ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման մասին.

կարգավորված չէ: Հարյուր հազարավոր մարդիկ դեռևս տեղահանված են եւ չփախչողական պայմաններում են ապրում: Ադրբեջանի տարածքի զգալի մասը դեռ օկուպացված է հայկական ուժերի կողմից, եւ Լեռնային Ղարաբաղը դեռևս վերահսկում են անջատողական ուժերը:

2. Վեհաժողովը մտահոգություն է հայտնում, որ զինված գործողությունները եւ դրանց նախորդած լայնատարած էթնիկ բախումները հանգեցրել են լայնածավալ էթնիկ վտարման մոնոէթնիկ շրջանների ձևավորման: Վեհաժողովը վերահաստատում է՝ որեւէ պետությունից տարածաշրջանային հողակտորի անկախացումն ու անջատումը կարող է տեղի ունենալ միայն այդ տարածքի բնակիչների ժողովրդավարական աջակցությունը վայելող օրինական եւ խաղաղ գործընթացի հիման վրա, այլ ոչ թե էթնիկ վտարման եւ այլ պետության կողմից տվյալ տարածքի բռնագավթման պատճառ դարձած զինված հակամարտության արդյունքում: Վեհաժողովը մեկ անգամ եւս նշում է, որ անգամ երկրի կողմից այլ տարածքի օկուպացիան, այդ երկրի՝ որպէս ԵՆ անդամի պարտավորությունների կոպիտ խախտում է եւ վերահաստատում է հակամարտության շրջանից տեղահանված անձանց իրենց տներ անվտանգ եւ արժանապատվորեն վերադառնալու իրավունքը¹¹:

Վերը նշված փաստաթղթերում առաջին հերթին աչք է ծակում խնդրի ձեւակերպման արհեստականությունը՝ «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտություն»: Այսինքն՝ փորձ է արվում ԼՂՀ-ն ամբողջովին անտեսել որպէս հակամարտող կողմ՝ խնդիրը հավասարեցնելով ադրբեջանական որեւէ շրջանի շուրջ երկկողմ (Հայաստան-Ադրբեջան) հակամարտության, ինչի համատեքստում եւ արդարացվում են «անջատողական վարչակարգ», «օկուպացված տարածքներ»¹² ձեւակերպումները: Վերը նշված բանաձեւում առաջին անգամ խոսվում է Մինսկի խմբին զուգահեռ դարաբաղյան հակամարտությամբ զբաղվող այլ ձեւաչափի մշակման (ԼՂ հարցերով ԵՆԽՎ հատուկ հանձնաժողով) անհրաժեշտության մասին, ինչը եւ կյանքի կոչվեց հետագայում: Առաջին հայացքից նոր ենթահանձնաժողովը կրկնում եւ լրացնում է Մինսկի խմբի ձեւաչափը, քանի որ դրանում ներգրավված են նույն երկրները՝ խորհրդարանական պատվիրակություններով, սակայն կարծես թե անուշադրության է մատնվում հետեւյալ հանգամանքը. նախ՝ Մինսկի խումբը ձեւավորվել է փաստացիորեն և տարբայնորեն՝ առանց որեւէ հիմնադիր փաստաթղթի, եւ ժամանակի ընթացքում ստացվել է այնպէս, որ բանակցային բուն գործընթացին իրական մասնակցություն են ցուցաբերում հիմնականում եռանախագահները: Մյուս կողմից

¹¹Տե՛ս՝ Բանաձև 1416 (2005) ԵԱՀԿ Մինսկի համաժողովի շրջանակներում կարգավորվող Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ հակամարտությունը (25 հունվարի, 2005թ.).

¹² Տե՛ս՝ Վեհաժողովի ֆինալիումը, 25 հունվարի, 2005 (2-րդ Նստաշրջան), Քաղաքական հարցերով հանձնաժողովի հաշվետվությունը, գեկուցող՝ պրն Աթլինսոն): Տե՛ստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 25 հունվարի, 2005 (2-րդ Նիստ).

Խնդրի կարգավորման բանակցությունների արդյունավետությունը հազիվ թե կախված լինի այն հանգամանքից, արդյո՞ք բանակցային տվյալ ձեռնարկում մասնակիցներն ու միջնորդները հանդես են գալիս գործադրի, թե օրենսդրի ներկայացուցիչներով:

Չմոռանալ նաև, որ վերը նշված երկու փաստաթղթերն ընդունվել են բրիտանացի խորհրդարանական Դեւիդ Աթկինսոնի կազմած գեկույցի հիման վրա: Իսկ Մեծ Բրիտանիան եւ Միացյալ Նահանգները 1990-ականների վերջից ակտիվորեն ֆարգում եւ ֆինանսավորում էին Ռուսաստանից անկախ էներգակիրների շուկայի դիվերսիֆիկացումը, որտեղ Ադրբեջանը կարևոր նշանակություն ուներ՝ ե՛ւ որպես էներգակիրների աղբյուր, ե՛ւ որպես դրանց տարանցման ուղի: Այս ծրագրի շրջանակներում 2005-ին (ԵՆՆՎ 1416 բանաձևի ընդունումից երեք ամիս անց) գործարկվեց Բաբու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Այս հանգամանքը թերեւս ԵՆՆՎ շրջանակներում տրամադրությունների փոփոխման միակ եւ կարևորագույն պատճառը չէ, այնուամենայնիվ, ակնհայտ է այն միտումը, որ այդ փոփոխությունները գնալով առավել սուբյեկտիվ են դառնում:

Լեռնային Ղարաբաղին առնչվող ԵՆՆՎ փաստաթղթերի շարքում թիվ 1416 բանաձևը դարձավ բեկումնային: Նշված փաստաթղթով եւ դրանից հետո ընդունված բանաձևերում ակնհայտ են դարաբաղյան հակամարտությունը՝ որպես գուտ Ադրբեջանի ներքին խնդիր ներկայացնելու փորձերը: Վեհաժողովը իր 1416 (2005) բանաձևում հիշեցնում է իր մտահոգությունն առ այն, որ ռազմական գործողությունները եւ դրանց նախորդած լայնատարած էթնիկ թեմանությունը հանգեցրին թե՛ լայնածավալ էթնիկ արտաքսման, թե՛ ստեղծեցին մոնոէթնիկ տարածքներ: Ուստի, Վեհաժողովն այստեղ կոչ էր անում կողմերին ուժեղացնել իրենց ջանքերը Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի երկու համայնքների միջև խաղաղությունը եւ ներդաշնակությունը վերականգնելու ուղղությամբ¹³:

Եթե մինչև այժմ դարաբաղյան հակամարտության կարգավորումը Հայաստանին եւ Ադրբեջանին առնչվող ԵՆՆՎ փաստաթղթերում փորձ էր կատարվում ներկայացնել հնարավորինս զեզոք և եթե Արցախի բնակիչների շահերը գոնե մասամբ արտահայտվում էին մեր երկրին առնչվող փաստաթղթերում, ապա դիտարկվող ժամանակահատվածում Արցախը՝ որպես տարածքային միավոր, և Արցախի բնակիչները՝ որպես ինքնավարության ձգտող ժողովուրդ, կարծես անհետացել են փաստաթղթերից՝ ներկայացվելով որպես Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ֆայխայող անջատողական եւ մարդասիրական իրավունքը ոտնահարող (այդ մասին է վկայում մասնավորապես «էթնիկ գտումների» մեղադրանքը) տարրեր: Արցախին ուղղված մեղադրանքների շարքը շարունակում է զարգանալ նաև ԵՆՆՎ հետագա փաստաթղթերում՝

¹³ Տե՛ս՝ Բանաձև 1545 (2007) (16 ապրիլ, 2007) Ադրբեջանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների կատարման մասին.

նույնիսկ տեղ գտնելով առաջին հայացքից հակամարտության հետ որեւէ առնչություն չունեցող բանաձեւերում:

2007թ-ի Հունիսի 24-ին ԵՆՆՎ-ի կողմից ընդունված բանաձևում ասվում էր՝ Նախկին Հարավսլավիայից հետո Անդրկովկասը Եվրոպայի այն տարածաշրջանն է, որը ներկայումս առավելագույնն է տուժում փախստականների եւ տեղահանված անձանց խնդիրներից, որոնցից շուրջ 900000 գտնվում են Ադրբեջանում, 300000 Հայաստանում եւ 300000 Վրաստանում: Միեւնույն ժամանակ, հարյուրհազարավոր մարդիկ տարածաշրջանից մեկնել են այլ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան¹⁴: Այս բանաձևով Հայաստանի և Ադրբեջանի դեկավարություններին առաջարկվում էր՝ Ադրբեջանում տեղահանված անձանց վերադարձը դարձնել առաջնահերթություն իրենց բանակցությունների ժամանակ, որպեսզի այդ մարդկանց հնարավորություն տրվի անվտանգ վերադառնալ, նույնիսկ նախքան ընդհանուր կարգավորման հասնելը: Առաջարկվում էր ֆանաչել փախստականների եւ տեղահանված անձանց դեպի իրենց ծննդավայրեր վերադառնալու, նրանց սեփականությունը վերականգնելու իրավունքը՝ նրանց կրած ցանկացած վնասի պատճառ փոխհատուցմամբ, իսկ կամավոր վերադարձը ապահովել չկարողանալու դեպքում նախատեսվում էր ֆանաչել փախստականների եւ տեղահանված անձանց կորցրած կամ լքված սեփականության դիմաց փոխհատուցում ապահովելու անհրաժեշտությունը եւ կնքել համաձայնություն, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ անձանց հնարավորինս արագ փոխհատուցում ստանալ¹⁵: Այս բանաձեւի 8-րդ մասի ա կետը կրկին շեշտում է, որ ԵՆՆՎ փաստաթղթերում արցախյան հակամարտության կարգավորումը դիտարկվում է միայն ուժի չկիրառման եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքների համատեքստում, մինչդեռ ԵՆՆՎ նախորդ բանաձեւերում հստակ երեւում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ընկալումը: Ակտիվ ռազմական գործողությունների ավարտից տարիներ անց կարգավորման բանակցային գործընթացին զուգահեռ, խնդրի ընկալման և դիրքորոշումների նման փոփոխությունների պատճառը չի կարելի միանշանակ սահմանել, այնուամենայնիվ փաստ է, որ դրանք չեն կարող լինել օբյեկտիվ, ֆանի որ ռազմական գործողություններին հաջորդած տարիների ընթացքում խնդրի էությունը հազիվ թե կարող էր փոխվել:

ԵՆՆՎ շրջանակում ընդունված հաջորդ բանաձեւերը եւս շարունակում են հավատարիմ մնալ նույն սկզբունքներին: Մասնավորապես 2008թ-ին ընդունված բանաձևում գրված է, որ վեհաժողովը կարծում է, որ

¹⁴ Տե՛ս՝ Հանձնարարական 1335 Անդրկովկասում փախստականների եւ տեղահանված անձանց վերաբերյալ (24 հունիս, 2007).

¹⁵ Տե՛ս՝ Նույն տեղում 7Ա .

կայուն ժողովրդավարական զարգացման հասնելը չափազանց դժվար կլինի Ադրբեջանում, քանի դեռ երկրի տարածքային ամբողջականությունը չի վերականգնվել¹⁶:

Վերջին տարիների ընթացքում կարող ենք արձանագրել հայկական պատվիրակությունների կողմից նախնական լուրջ հակաֆայլերի իրականացում: Հատկապես հատկանշական էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԵՆՏՎ լիագումար նիստում, որտեղ ՀՀ նախագահը իր հայտարարության մեջ ասաց. «Ղարաբաղը եղել է, կա եւ կմնա Եվրոպայի մաս: Ղարաբաղի այսօրվա հանրությունը եվրոպական հանրության՝ եվրոպական ընտանիքի մասնիկ է՝ անկախ իր պետության ֆազաֆական կարգավիճակից: Ուստի եւ կարծում են, որ Եվրոպայի խորհուրդը կարող է, կարգավիճակից անկախ, ուղղակիորեն շփումներ նախնականել Ղարաբաղի հետ՝ իր իսկ գործառույթների շրջանակներում, առավել եւս, երբ Եվրոպայի խորհուրդը նման փորձ ունի այլ հակամարտությունների գոտիներում»¹⁷:

Հայ պատգամավորները ԵՆՏՎ-ի գործունեության մասին ֆննադատաբար էին արտահայտվում հատկապես 2012թ-ին: Հայկական պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի ելույթը Ռ. Սաֆարովի վերաբերյալ ԵՆՏՎ-ում հնչեցված կարծիքների մասին այս իմաստով ամենաֆննադատականներից է: Ելույթում Դ. Հարությունյանը մասնավորապես նշում էր. «Մենք ուզում ենք կոչ անել ԵՆՏՎ-ին՝ հստակ եւ միանշանակ արձագանքներ ապահարցին որքան հնարավոր է արագ: Լուրջունն ու անտարբերությունը, ԵՆՏՎ-ի ոչ միանշանակ եւ հեղհեղուկ հայտարարությունները այլեւս ընդունելի չեն»¹⁸:

¹⁶ Տե՛ս՝ Բանաձև 1614 (2008) (24 հունիս, 2008) Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Ադրբեջանում. Արցախյան վաստակել է նախաձեռնված լինելու իրավունքը.

¹⁷ Տե՛ս՝ Արցախյան վաստակել է նախաձեռնված լինելու իրավունքը, Առավոտ օրաթերթ, 05.10.2013թ. Available at <http://www.aravot.am/2013/10/05/393087/>.

¹⁸ Տե՛ս՝ <http://www.panorama.am/am/politics/2012/09/04/harutyunyan-speech/>.

Annotation

In this article an attempt is made to represent the documents adopted by the Parliamentary Assembly of the Council of Europe on Nagorno Karabakh since 1992. From the very beginning PACE was approaching the conflict from humanitarian point of view. But everything changed after adopting Resolution 1416 in 2005 and the documents following it, as in those documents the conflict is represented merely as an internal problem of Azerbaijan. The article presents the dynamics of the statements and decisions made by the Assembly, as well as their reasons and the actions undertaken by Armenian delegations.

Аннотация

В этой статье сделана попытка представить документы, принятые Парламентской ассамблеей Совета Европы по Нагорному Карабаху с 1992 года. С самого начала ПАСЕ относился к конфликту с гуманитарной точки зрения. Но после принятия резолюции 1416 в 2005 году и последующих документов все меняется, поскольку конфликт представляется как чисто внутренняя проблема Азербайджана. В статье представлена динамика заявлений и решений, принятых Ассамблеей, а также их причины и действия, предпринятые армянскими делегациями.